ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» դեկտեմբերի 2012թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի h.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով, հաշվի առնելով Ռուբեն Հարությունյանի դիմումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

. 1.Տալ համաձայնություն՝ Ռուբեն Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 21.01.2009թ. h.2575221 և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման h.03042012-01-0231 վկայականները) Սարկավագի փողոց h.66/2 հասցեում գտնվող 349.65 քմ մակերեսով հողամասը Անտառային փողոցի h.h.54/1 և 11 տների միջանկյալ հատվածում գտնվող Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 200.0 քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելու համար՝Ռուբեն Հարությունյանի կողմից հողամասերի շուկայական արժեքների տարբերությունը կազմող 2 միլիոն դրամը վճարելու պայմանով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

<<ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քննարկվող նախագծով նախատեսվում է քաղաքացի Ռուբեն Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 21.01.2009թ. հ.2575221 և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.03042012-01-0231 վկայականներ) Սարկավագի փողոց հ.66/2 հասցեում գտնվող 349.65 քմ մակերեսով հողամասը փոխանակել Անտառային փողոցի հ.հ.54/1 և 11 տների միջանկյալ հատվածում գտնվող Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 200.0 քմ մակերեսով հողամասի հետ։

Ռուբեն Հարությունյանն իր սեփականությունը հանդիսացող, Սարկավագի փողոց հ.66/2 հասցեում գտնվող հողամասի վրա հասարակական նշանակության շինարարություն կառուցելու համար՝ բազմիցս դիմել է Երևանի քաղաքապետարան։ Սեփականատերը նշված տարածքում կատարել էր հողային աշխատանքներ, սակայն ելնելով քաղաքացիների բազմաթիվ բողոքներից և խաղահրապարակ կառուցելու ցանկությունից՝ Ռուբեն Հարությունյանին քաղաքաշինական փաստաթղթեր չտրամադրեցին և կառուցապատում չիրականացվեց։ Տեղի ունեցած բազմաթիվ բանակցությունների արդյունքում ապամոնտաժվեց քաղաքացու սեփականությունը հանդիսացող տաղավարը և տեղում հիմնվեց խաղահրապարակ։

Ստեղծված իրավիճակում խնդրի կարգավորման նպատակով Ռուբեն Հարությունյանին առաջարկվել է սեփականության իրավունքով պատկանող և ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի 7-րդ գոտում գտնվող 349.65քմ մակերեսով հողամասը փոխանակել Անտառային փողոցի հ.հ.54/1 և 11 տների միջանկյալ հատվածում գտնվող ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի 2-րդ գոտում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 200.0 քմ մակերեսով (ծածկագիր՝ 01-066-023-001, 01-006-115-001 և 01-006-114-001) հողամասի հետ։

Համաձայն << Տիգրիս >> ՍՊ ընկերության կողմից 2012 թվականի նոյեմբերի 12-ին ներկայացված շուկայական արժեքի գնահատման հաշվետվության՝ Սարկավագի փողոցի հ.66/2 հասցեում գտնվող 349.65քմ հողամասի սեփականության իրավունքի շուկայական արժեքը, առ 09.11.2012թ կազմում է 32 մնլ.դրամ, իսկ Կենտրոն համայնքի Անտառային փողոցի հ.54/1 և հ.11 հասցեների միջև գտնվող 200.0քմ հողամասի սեփականության իրավունքի շուկայական արժեքը, առ 09.11.2012թ կազմում է 34 մնլ.դրամ, որի պարագայում Ռուբեն Հարությունյանը պատրաստ է վճարելու գումարի տարբերությունը։

Քննարկվող հողամասերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1), 2) և 3) ենթակետերի պահանջներին, ընդգրկված չեն նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում։

<<Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին>> Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է քննարկվող հողամասերի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու հանգամանքով։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
<<ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
<<ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ Երևան համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ